Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ-ի Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Տնօրենի դերը դպրոցի վարկանիշի բարձրացման հարցում

Հետազոտող ուսուցիչ՝ Արմինե Արշակյան

Բովանդակություն

Ներածություն 3
Դպրոցի կառավարման սկզբունքները 6
Դպրոցի տնօրենը ղեկավար է, թե՞ առաջնորդ 7
Դպրոցի ղեկավարումը սեփական օրինակով 9
Ուսումնական գործընթացի հետաքրքիր և ճիշտ կազմակերպում 12
Եզրակացություն 15
Գրականություն 16

Ներածություն

21-րդ դարում կան բազմաթիվ հիմնախնդիրներ և դրանց արդյունքում առաջացած մարտահրավերներ: Պետությունների կողմից որդեգրած կայուն զարգացման գործընթացում կարևորագույն մարտահրավերներից է որակյալ կրթությունը, որը հասարակության ինտելեկտուալ ներուժի և տնտեսության զարգացման հիմքն է:

Այսօր հաջորդ սերունդներին որակյալ կրթությամբ ապահովելը երկրների համար դարձել է կարևորագույն հիմնախնդիրներից մեկը:

ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից չորրորդը հենց վերաբերում է որակյալ կրթությանը, ըստ այդ նպատակի մինչև 2030 թվականը պետությունները պարտավորվում են ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունները:[1]

Որակյալ կրթության հիմքը սկսվում է նախադպրոցական ուսումնական հաստատություններից այնուհետև անցում կատարում հանրակրթություն: Այս առումով հանրակրթական ուսումնական հաստատությունները մեծ դեր ունեն մարդու կրթության ու դաստիարակության գործում: Եվ թե հետագայում ինչպիսի կարողունակություններով անհատ կձևավորվի որոշվում է հենց հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Ըստ իս որակյալ կրթությունն ապահովելու համար կան մի շարք գործոններ որոնց վրա պետք է հենվել.

- Դպրոցի ճիշտ ղեկավարում /հմուտ ղեկավար կազմ. Տնօրեն, փոխտնօրեններ/
- Որակյալ ուսուցչական կազմ
- Անհրաժեշտ նյութատեխնիկական բազա
- Անհրաժեշտ շենքային պայմաններ
- Հարուստ գրականություն / ներառյալ անհրաժեշտ դասագրքերը/
- Այլ

Այս աշխատանքի շրջանակներում անդրադարձ կկատարվի հենց դպրոցի ճիշտ ղեկավարման հարցին, որը բարձր վարկանիշով դպրոց ունենալու և որակյալ կրթություն տալու կարևորագույն գրավականներից մեկն է:

[1] Sustainable Development Goal 4: Որակյալ կրթություն | Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում (un.org)

Այս աշխատանքում կքննարկվեն հետևյալ հարցերը

- Արդյոք կարևոր դեր ունի դպրոցի տնօրենը դպրոցի վարկանիշի բարձրացման և որակյալ կրթություն ապահովելու հարցում
- Ինչպես պետք է տնօրենը կազմակերպի իր աշխատանքները որպեսզի ավելի արդյունավետ լինի ուսուցումը
- Տնօրեն ուսուցիչ հարաբերությունները կարող են ազդել ուսուցման որակի վրա
- Տնօրենը օրինակ է թե ոչ

Սրանք այն հիմնական հարցերն են որոնց կփորձենք պատասխանել իհարկե ներդնելով սեփական օրինակը և փորձը :

Դպրոցի կառավարման սկզբունքները

Ցանկացած կառավարում, այդ թվում նաև դպրոցի կառավարումը, ունի իր օրինաչափությունները, առանձնահատկություններն ու սկզբունքները: Կառավարումը , ինչպես ցանկացած գործունեություն, հիմնվում է մի շարք սկզբունքների և մեթոդների ապահովման վրա: Կառավարման սկզբունքները համարվում են կարևորագույն կատեգորիաներ, որոնք միաժամանակ ունեն և օբյեկտիվ , և սուբյեկտիվ բնույթ,ինչը պահանջում է ղեկավարից լուրջ, կշռադատված վերաբերմունք:

Դպրոցի կառավարման մեջ <<սկզբունք>> ասելով պետք է հասկանալ այն ընդանուր դրույթը, որը կրթության և դաստիարակության նպատակի իրականացման ելակետն է, կազմում է կառավարման գործողությունների ու ընդհանուր համակարգի հիմքը և որին հետևելով՝ ավելի արդյունավետ է դառնում կառավարման գործընթացը:

Դպրոցի կառավարման սկզբունքները ճկուն են և փոփոխական՝ կապված կազմակերպության կառուցվածքի, տեսակի, նպատակների, գործողությունների, կոլեկտիվի կազմի և այլ հանգամանքների հետ:

Կառավարման սկզբունքները բխում են պետության կրթական քաղաքականությունից և պայմանավորված են դպրոցների յուրահատկությամբ :

Դպրոցի ճիշտ կառավարման սկզբունքների հիմքում պետք է լինեն մանկավարժական համակարգի ժողովրդավարացումը, մարդասիրական ղեկավարումը, համակարգվածությունը, մանկավարժների գիտական նվաճումների, առաջավոր փորձի ներդրումը,գործողությունների համաձայնեցվածությունը, կարգապահությունը, աշխատանքների կենտրոնացումը, մանկավարժական կոլեկտիվի հաստատուն կազմը, նախաձեռնությունը, նպատակների ընդհանրությունը, ղեկավարման միասնությունը, կառավարող սուբյեկտի կողմից իր հնարավորությունների և փորձի հաշվառումը, ուսումնական ծրագրերի ու պլանների նկատմամբ միասնական պահանջները և այլն:

Դպրոցի տնօրենը ղեկավար է, թե՞ առաջնորդ

Դպրոցի տնօրենի աշխատելաոճը հիմնականում պայմանավորված է նրա անձնական հատկանիշներով, գիտելիքների պաշարով և գործնական որակներով:

Անձնակազմի հետ աշխատելու, ուսուցիչների, աշակերտների հետ շփվելու ընթացքում տնօրենն օգտագործում է կառավարման տարբեր սկզբունքներ, մեթոդներ ու ձևեր , որոնց ընտրությունը պայմանավորված է երկու գոծոններով՝ կոնկրետ իրավիճակով և անձնական հակումներով, որոնցով էլ պայմանավորված է ղեկավարման արդյունավետությունը:

Մարդկության զարգացման հետ զուգահեռ անընդհատ փոփոխվում են կառավարման ձևերը, տեսակները և սկզբունքները:

Ամերիկացի մանկավարժ և հոգեբան Արթուր Կոմբասը հետևյալ հատկանիշներով է բնութագրում լավ և վատ կառավորողներին:

Վատ կառավորողներ

1.Կարևոր են հիմնարկության արտաքին տեսքը, կարգը ու կանոնը, մաքրությունը:

2.Անհանգստանում են իրերի համար:

3. Գտնում են, որ մարդկանց չպետք է վստահել, և որ նրանք անկարող են և անվստահելի:

4.Ոտնահարում են մարդկանց արժանապատվությունը և պատիվը:

5.Իրենց դրականորեն չեն գնահատում:

6.Ցանկանում են վերահսկել բոլորին:

7.Ունեն սահմանված նպատակներ:

8.Ամեն բան ծածուկ են տանում:

Լավ կառավարողներ

1. Կարևոր են գործընկերների ներքին հոգեվիճակը, այսինքն՝ նրանց զգացմունքները, համոզմունքները, կարծիքը, արժեքավորումը:
2. Անհանգստանում են մարդկանց համար:
3. Գտնում են, որ մարդկանց կարելի է վստահել, որ նրանք ընդունակ են և վստահելի:
4. Պաշտպանում են մարդկային արժանապատվությունն ու պատիվը:
5. Իրենք իրենց վերաբերվում են դրականորեն:
6. Ցանկանում են ազատվել բոլորին վերահսկելուց:
7. Ունեն հեռուն գնացող պլաններ:
8. Ամեն բան բացեիբաց են անում:

Եթե դիտարկում ենք այս դասակարգումը ըստ երևույթին պարզ է դառնում, որ տրված են հենց ղեկավարի և առաջնորդի հատկանիշները:

Լավ տնօրենը կամ առաջնորդը հենվում է ուսուցիչների և աշակերտների վստահության և համագործակցության վրա: Հենց այդ համագործակցությունն էլ համարվում է ուսումնադաստիարակչական գործընթացի կարևորագույն առանձնահատկություններից մեկը, որի հիման վրա էլ ձևավորվում է ուսումնական ողջ գործընթացը: Եվ հենց տնօրենի ճիշտ կառավարումից է կախված տվյալ համայնքում դպրոցը կունենա բարձր վարկանիշ թե ոչ:

Դպրոցի ղեկավարումը սեփական օրինակով

2017 թվականից առ այսօր աշխատում եմ Գ. Զոհրապի անվան հ. 97 ավագ դպրոցում որպես տնօրեն , զուգահեռ նաև աշխարհագրության ուսուցիչ:

2017 թվականի հուլիս ամսին դպրոցը ուներ ընդամենը 50 աշակերտ 2022 թվականին աշակերտների թիվը հասել է մոտ 200-ի , սա համարում եմ այս 5 տարիների համար որոշակի ձեռք բերում:

Ինչպես արդեն վերևում նշվեց կան կառավարման տարբեր մոտեցումներ և սկզբունքներ և դրանք շատ հաճախ կախված են նաև տնօրենի անձնային հատկանիշներից և ղեկավարման պատկերացումներից:

Մինչ դպրոցի տնօրեն դառնալը արդեն իսկ հստակ պատկերացնում էի աշխատելաոճս և թե ինչ սկզբունքներով պետք է առաջնորդվեի, քանի որ ինքնուրույն անընդհատ շրջապատի ուսուցիչների կարծիքների միջոցով փորձում էի դիտարկումներ կատարել, թե հիմնականում ինչ սխալներ են թույլ տալիս տնօրենները ղեկավարման ընթացքում և հիմնականում դրանք էին.

- փորձում են ղեկավարել միանձնյա առանց անձակազմի կարծիքը հաշվի առնելու
- փորձում են վերահսկել բոլորին
- թույլ է դպրոց – ծնող կապը
- տնօրենը հասանելի չէ ծնողների և աշակերտների համար
- տնօրենը հրահանգող է միայն / սեփական օրինակը բացակայում է/

Այս բոլոր թերությունները վերլուծելով 2017 թվականին նշանակվելով տնօրեն փորձեցի ձևավորել ղեկավարման իմ մոդելը:

- Դպրոցին վերաբերող բոլոր հարցերը լուծել քննարկումների արդյունքում ՝ հաշվի առնելով թե մանկավարժների, թե աշակերտների և թե ծնողների կարծիքը (կախված հարցի բնույթից)
- Իհարկե դա տնօրենի պարտականությունն է վերահսկել դպրոցի աշխատանքները սակայն յուրաքանչյուր աշխատակից պետք է իմանա, որ կան հարցեր որոնք իրենք պետք է ինքնուրույն որոշում կայացնեն: Օրինակ՝ դասղեկները հստակ գիտեն, որ դասարանների հետ կապված որոշումները իրենք պետք է կայացնեն ինքնուրույն, իհարկե չհակասելով դպրոցի ներքին կարգապահությանը:
- Ծնողները առավելագույնս ներգրավված են ուսումնական գործընթացում: Հաճախակի կազմակերպվում են ծնողական ժողովներ, հանդիպումներ ծնողների

և հոգեբանի հետ, հանդիպումներ տնօրենի և ծնողկոմիտեների նախագահների հետ: Դասղեկները ունեն բացված առցանց խմբեր ծնողների հետ որտեղ քննարկվում են դասարանին վերաբերող հարցերը, դասղեկները անընդհատ տեղեկացնում են ծնողներին երեխայի բացակայության մասին:

- Կարծում եմ դպրոցում աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար կարևոր հարցերից է նաև տնօրենի հասանելիությունը: Շատ հաճախ հանդիպում ենք դեպքերի, երբ տնօրենի սենյակի դուռը միշտ փակ է և աշխատակիցները, ծնողները կամ աշակերտները տնօրենի հետ չեն կարողանում կապ հաստատել, խոսել:

Սա ևս շատ կարևոր է որպեսզի տնօրենի նկատմամբ վստահություն հաստատվի աշակերտը, ծնողը կամ ուսուցիչը պետք է իմանա, որ տնօրենը պատրաստ է լսել իրենց:

Իհարկե աշակերտները և ծնողները պետք է հստակ գիտակցեն, որ դասարանի, ուսման կամ կարգապահության հետ կապված հարցերը պետք է քննարկեն դասղեկների հետ:

- Շատ հաճախ տնօրենները աշխատանքներ կատարելիս հանդես են գալիս միայն հրահանգողի դերում, առանց ցույց տալու սեփական օրինակով: Կարևոր է, որ թե աշակերտները և թե աշխատողները հասկանան, որ տնօրենը իրենցից մեկն է, այսինքն իրենք բոլորով մեկ թիմ են:

Օրինակ՝ բոլոր շաբաթօրյակներին պարտադիր ունենում եմ մասնակցություն և երբ երեխան տեսնում է , որ տնօրենը ինքն էլ է աղբ հավաքում, դա իր համար դառնում է լավագույն օրինակ: Կամ երբ տնօրենը աշխատանքի է ներկայանում ժամանակին աշակերտի մոտ պարտավորություն է առաջանում դասից չուշանալու:

Որպես կանոն երեխաների համար շատ կարևոր է, երբ մեծահասակը իր խոսքը ապացուցում է նաև գործով, սեփական օրինակով:

Մեր դպրոցում իրականացված հարցման արդյունքում պարզ դարձավ, որ հենց աշակերտներն էլ են կարևորում տնօրենի ճիշտ ղեկավարման դերը դպրոցում:



Այսպիսով շատ կարևոր է որպեսզի տնօրենը կարողանա ճիշտ ղեկավարում իրականցնի, իհարկե հաշվի առնելով նաև տվյալ համայնքի առանձնահատկությունները

ՈՒսումնական գործընթացի հետաքրքիր և ճիշտ կազմակերպում

Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների, սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:[2]

Միջնակարգ կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 12 տարի ընդհանուր տևողությամբ՝ հետևյալ հաջորդական աստիճաններով.

1) տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ).

2) միջին դպրոց (5-9-րդ դասարաններ).

3) ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ):[3]

Ավագ դպրոցի հիմնական նպատակը.

սովորողի մասնագիտական կրթություն ստանալու, ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ապահովումն է:

Ավագ դպրոցի առաքելությունն է ապահովել.

- սովորողների պատրաստվածությունը ինքնուրույն կյանք վարելու,
- իրենց հակումներին, ընդունակություններին, կարողություններին և նախասիրություններին համապատասխան նախնական, միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը:[4]

Ինչպես տեսնում ենք ավագ դպրոցի նպատակը և առաքելությունը միտված է ինքնուրույն կյանքին պատրաստված, գիտելիքներով հարստացած, որոշակի կորողունակություններով օժտված քաղաքացի ձևավորելուն :

Սակայն շատ հաճախ ավագ դպրոցները չեն կարողանում ճիշտ և որակյալ կրթություն ապահովել ինչն էլ նպաստում է նրան, որ ընդհանուր ընկնում է ավագ դպրոցների վարկանիշը:

Ավագ դպրոցների ավարտական դասարաններում շատ լուրջ խնդիր է նաև սովորողների դպրոց հաճախելու խնդիրը, քանի որ հիմնականում նրանք հաճախում են կրկնուսույցների մոտ ԲՈՒՀ-եր ընդունվելու համար:

Ընդհանրապես ուսուցման գործընթացը շատ բազմազան է և բազմաբնույթ այն չի սահմանապակվում միայն դաս-դասարան-դպրոց համակարգով: Այն պետք է

---

[2] «Կրթության մասին» ՀՀ օրենք, Երևան, 1999

[3] ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (irtek.am)

[4] ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ (irtek.am)

հիմնված լինի ոչ միայն դասարանական այլ նաև արտադասարանական տարբեր պարապմունքների, միջոցառումների, այցելությունների, արշավների և մի շարք այլ գործընթացների վրա: Հատկապես ավագ դպրոցում պետք է կարողանալ ապահովվել և՝ սովորողի նախասիրություններին համապատասխան կրթություն և՝ այնպիսի կրթություն, որը կնպաստի սովորողին կողմնորոշվել իր հետագա մասնագիտական ընտրության մեջ:

Շատ հաճախ ավագ դպրոցներում պատշաճ կերպով ուշադրություն չեն դարձնում վերը թվարկված գործոններին, որի հետևանքով էլ սովորողին հետաքրքիր չէ ավագ դպրոցում և այն դիտարկվում է, որպես երեք տարիների անիմաստ կորուստ:

Այս առումով շատ կարևոր է ավագ դպրոցներում ուսուցման ճիշտ և հետաքրքիր կազմակերպումը, ստորև թվարկենք մի շարք մոտեցումներ

1. Ըստ դպրոց դիմած աշակերտների նախասիրությունների հոսքերի ձևավորում:

Շատ հաճախ դպրոցները ձևավորում են հոսքեր առանց հաշվի առնելու սովորողների նախասիրությունները: Օրինակ կան ավագ դպրոցներ, որտեղ ուսուցումը կազմակերպում են հումանիտար, բնագիտական և ընդհանուր հոսքերում: Սակայն կարելի է հոսքերը բաժանել ենթահոսքերի. Հումանիտար հոսքում առանձնացնել լիզվաբանական, պատմական կամ պատմահրավագիտական, բնագիտականում ֆիզմաթ, կենսաքիմիա, տեխտեսագիտական: Իսկ ընդհանուր հոսքը իմ կարծիքով ընդհանրապես ճիշտ չէ ավագ դպրոցներում ունենալ, քանի որ այստեղ երեխան որևէ ուղվածությամբ կրթություն չի ստանում: Շատ քիչ դպրոցներ կան, որ ունեն արհեստագործական հոսք:

Բացի դա կարծում եմ որ ավագ դպրոցները պետք է ազատ լինեն հոսքեր ձևավորելու հարցում հաշվի առնելով երեխաների նախասիրությունները:

2. ՈՒժեղ մանկավարժական թիմի ձևավորում:

Սա կարծում եմ դպրոցում որակյալ ուսուցում ապահովելու կարևորագույն նախապայմանն է: Դասավանդող ուսուցիչների մասնագիտական և մանկավարժական հմտություններից է կախված դպրոցում կապահովի որակյալ ուսուցում թե ոչ: Այս առումով շատ կարևոր է տնօրենի դեր, ով պետք է կարողանա հավաքել ուժեղ, աշխատող, փոփոխություններին արձագանքող թիմ: Կարևոր է անընդհատ դասալսումներ իրականացնելը դրանք քննարկելը և ուսուցիչներին ուղորդելը:

Շատ արդյունավետ է նաև աշակերտների շջանում սոց հարցումներ անցացնելը, որի արդյունքում պարզ է դառնում թե որ ուսուցիչը որտեղ է թերանում

3. Ակումբների ստեղծում

Այս առումով շատ կարևոր է դասրանից դուրս երեխաների ուսուցման գրոծընթացի կազմակերպումը: Օրինակ մեր դպրոցում ըստ երեխաների նախասիրությունների ստեղծվել են ակումբներ՝ պատմագետների, ընթերցասերների, ռուսերենի, անգլերենի, էկոակումբ որտեղ երեխաները դասերից դուրս իրականացնում են մի շարք ծրագրեր, գտնում են բոլոր այն հարցերի պատասխանները որոնք չեն հասցնում դասերի ընթացքում:

4. Մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ, այցելություններ

Դպրոցը պետք է բաց լինի համագործակցելու բոլոր տիպի կառույցների հետ՝ հատկապես ավագ դպրոցը: Տարվա ընթացքում պետք է կազմակերպվեն հանդիպումներ, այցելություններ տարբեր ուսումնական հաստատություններ՝ ԲՈՒՀ-եր, ուսումնարաններ, քոլեջներ:

Այցլություններ տարբեր կազմակերպություններ՝ Կենտրոնական բանկ,դատարաններ, գործարաններ, արտադրամասեր և այլն

Այս ամենը նպաստում է սովորողների մոտ նախասիրությունների բացահայտմանը և նպաստում է հետագա մասնագիտական ճիշտ կողմնորաշմանը:

5. Տարբեր հանրապետական և միջազգային մրցույթների և նախագծերի մասնակցություն:

Շատ կարևոր է թե աշակերտները և թե ուսուցիչները մասնակցեն տարբեր մրցույթների և նախագծերի որպեսզի նրանք կարողանան ավելի լավ գնահատել իրենց կարողությունները, ձեռք բերեն նոր գիտելիքներ:

Այս տարիների ընթացքում մեր դպրոցում հիմնականում առաջնորդվում ենք այս սկզբունքներով և դա կարծում եմ նպաստում է կրթության որակի բարձրացմանը:

Դա է փաստում դպրոցում աշակերտների թվի ավելացումը (2017 թ. -50 աշակերտ, 2022թ-200 աշակերտ), համայնքում մեր դպրոցի նկատմամբ վստահության բարձրացումը:

6. <<Մասնագիտական կողմնորոշում>> որպես առարկայի ներմուծումը դպրոցում: Սա շատ կարևոր է, որին իհարկե այսօր ԿԳՄՍՆ-ի կողմից մեծ ուշադրության է արժանացել:

Եզրակացություն

ՈՒսումնական գործընթացը բարդ և բազմազան գործընթաց է, որտեղ կարևոր է յուրաքանչյուր գործոն: Սովորողների ուսուցումը արդյունավետ կազմակերպելու համար հարկավոր է իրականացնել տնօրեն-դպրոց-ծնող սերտ՝ եռակողմ համագործակցություն: Եվ իհարկե ողջ այս գործընթացի պատասխանատուն հանդիսանում է տնօրենը:

Տնօրենը պետք է օժտված լինի այնպիսի կարողություններով որոնց շնորհիվ կկարողանա իրականացնի դպրոցի ճիշտ ղեկավարում, որից էլ հենց կախված են մյուս բոլոր գործոնները:

Անձնակազմի հետ նորմալ բարոյահոգեբանական հարաբերությունների ստեղծումը, ճնշում չգործադրելը, վախի մթոլորտ չստեղծելը կհանգեցնի կհանգեցնի ուսուցչի պարտավորվածության իր աշխատանքը որակյալ կատարելուն (իհարկե տնօրենը պետք է իրականացնի աշխատանքների անընդհատ հսկողություն):

Մեր դպրոցի ուսուցիչների հետ անցկացված հարցման արդյունքում 90 % -ը պատասխանել է, որ հաճույքով է գալիս աշխատանքի, կոլեկտիվում առկա է նորմալ աշխատանքային հարաբերություններ:

Աշակերտների հետ հավասարը հավասարի ճփումը բերում է վստահության ավելացմանը: ԵՎ աշակերտը փորձում է իր քայլերով արդարացնել այդ վստահությունը:

Որպես թեմայի եզրափակում կարծում եմ, որ պետք է բացի ԿԳՄՍՆ-ի կողմից իրականացվող տնօրենների ընտրության քննությունները, ԿԶՆԱԿ-ի կողմից իրականոցվող տնօրենների և փոխտնօրենների վերապատրաստումները կազմակերպվեն նաև հատուկ դասընթացներ տնօրենների համար դպրոցի ղեկավարման էթիկա կամ դպրոցի արդյունավետ կառավարում թեմաներով:

Սա հնարավորություն կտա տնօրեններին ոչ թե միայն տիրապետել բոլոր իրավական ակտերին, այլ սովորել ճիշտ կառավարման բոլոր նրբությունները: Այսինքն հնարավորություն կտա տնօրեններին լինել առաջնորդ և ոչ թե ղեկավար:

Գրականություն

1. Sustainable Development Goal 4: Որակյալ կրթություն | Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում (un.org)
2. Կրթության մասին ՀՀ օրենք, Երևան, 1999
3. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (irtek.am)
4. ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ (irtek.am)